

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ՝
ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

28.01.2019

Հայոց բանակի հարգելի՛ զինվորներ, սպաներ, բարձրաստիճան սպաներ, ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած ազատամարտիկներ

Շնորհավորում եմ բոլորիս ՀՀ զինված ուժերի կազմավորման 27-ամյակի կապակցությամբ:

Հունվարի 28-ին նշվող Բանակի օրը թանկ է յուրաքանչյուր հայի համար ու հպարտություն է բերում ամենքիս, քանզի ոչ բոլոր ազգերը նման տոնի հնարավորություն ունեն. այն մեր ինքնիշխանությունը, մեր հաղթանակները խորհրդանշող տոն է: Բանակը Հայաստանի Հանրապետության անկախության տարիների ամենակարեւոր ձեռքբերումն է, մեր անվտանգության ու ապահով ապագայի գրավականը, եւ տոնի կապակցությամբ մաղթում եմ ձեզ անամպ երկինք, ամուր կամք, տոկունություն, առողջություն եւ մարտական անպարտելի ոգի:

Տոնական այս օրը մեր երախտագիտությունը՝ բոլոր նրանց, ովքեր նորանկախ Հայաստանի բանակաշինության հիմքն են դրել, ովքեր հերոսական էջեր են կերտել նրա հաղթանակների պատմության մեջ եւ մեր խոնարհումը՝ նրանց հիշատակին, ովքեր, ցավոք, նաեւ իրենց արյամբ են գրել այդ պատմությունը: Նրանց հերոսական կյանքը ոգեշնչում եւ օրինակ է զինվորական ծառայություն անցնող ամեն հայորդու համար: Այդ ոգու՝ սերնդեսերունդ փոխանցման եւ մեր զինված ուժերի շարքերում մշտական ներկայության ապացույցն էր Ապրիլյան քառօրյան:

Շնորհավորում եմ նաեւ ՀՀ զինված ուժերում այսօր ծառայողներ ունեցող բոլոր ընտանիքներին՝ ցանկանալով նրանց համբերատարություն եւ լավատեսություն, իսկ մեր սահմաններին կանգնած զինվորներին՝ խաղաղ եւ անվտանգ ծառայություն, բարի վերադարձ ընտանիքներ, ինչպես նաեւ շնորհավորանքներս՝ բանակի ամրության ու հզորացման մեջ ներդրում ունեցող բոլոր կառույցներին. պարտավոր ենք վստահելի թիկունք ապահովել մեր բանակի համար՝ ամենքս մեր աշխատանքի բնագավառում նպաստելով մեր պետականության, հետեւաբար եւ բանակի հզորացմանը:

Շնորհավո՛ր տոնդ, Հայոց բանակ: